

Ոտքըս փըլած քարի մը վրայ կը դընեմ,
 Եւ ուրիշի մ'յետոյ, յետոյ ուրիշի
 Մ'ու կ'ելլեմ դէ'պի կիսաքանդ պարըսպին.
 Ծերպերն որմին, ժամանակի վերքեր, ինձ
 Սանդուխ կ'ըլլան. քայլափոխես փըխըրըւած
 Կը թաւալին կոշկոռներ,
 Եւ մատերուն տակ ճանկող՝
 Բաղեղներէն, մորմերէն
 Զընաթաթախ մողէզներ վար կը թափին:
 Ու ես կ'ելլեմ. հոգիս խոր
 Արբշըռութեան մ'ուժին տակ
 Չիս աստղերուն կը քաշէ.
 Կը շուլլըւիմ, կը մագլիմ.
 Կայծքարերուն դէմ կուրծքըս մերկ կ'արիւնի,
 Կը մընայ մաս մ'ըզգեստես
 Վարը փուշի մը ճանկին մէջ աւագակ.
 Բայց ես կամշոտ, որսին դիմող վագրի պէս,
 - Եթէ ազատ բարձրութիւնն որսն է հոգւոյն -
 Կուռ ու տենդոտ խոյանքով,
 Մուրն ու փլատակն ոտքերես վար թօթափած,
 Նախնիներուն բիւր գանկերուն վըրայ գօս
 Հուսկ ոստումով մը խըրոխտ
 Պարիսպներուն հառաչակով կը կանգնիմ...

2

Ո՛վ բնագդական դու վերելք,
 Ո՛վ խոյացման գինովութիւն՝ նոյնիսկ սեւ
 Դամբանի վրայ կամ ոսկրի,
 Ո՛վ վեհ բարձունք՝ որ կը գըգուես ճիղմ հոգիս
 Չիս ընելով աճիւնին վրայ պապերուն